ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է

Հայ հին և միջնադարյան գրականության և

նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի

_N 6__ նիստում

"_04___"_12__2019թ.

________________

ՀԱՅ ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ

# ԱՄԲԻՈՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2019

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

| |
|---|
| Հաշվետու տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, կատարված ուսումնական աշխատանքի ծավալը: |
| (տեքստը այստեղ)<br>***Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը հաշվետու տարում ունեցել է նպատակները ու խնդիրները իրականացնող կադրային ներուժ, գործել է կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմ, իրականացրել է դասախոսների ընտրության հստակ մոտեցումներ:*** |
| Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումներն ու քաղաքականությունը, որքանով է այն նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը: |
| (տեքստը այստեղ)<br>***Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հաշվետու տարում ծրագրված գիտական և ուսումնական աշխատանքների ծավալն իրականացվել է: Դասախոսներն իրականացրել են ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը՝ ներգրավելով տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցները, ապահովելով դասագործընթացի արդյունավետությունը: Դասագործընթացի արդյունավետությանը նպաստել են նաև դասախոսությունների նորագույն՝ ինտերակտիվ և բանավիճային մեթոդները, որոնք ապահովում են ուսանողների ակտիվ մասնակցությունը դասերին:***<br><br>***Իրականացվել է հեռավար ուսուցում հեռակա ուսանողների և մագիստրոսների համար, որը տվել է որոշակի արդյունավետություն:*** |
| Հաշվետու տարում ամբիոնում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները, ուսումնառության արդյունքներից հետ կապը և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները: |
| (տեքստը այստեղ) ***Կատարված ուսումնական աշխատանքի արդյունավետությունը արտահայտվել է ուսանողների ակադեմիական գիտելիքների ձեռքբերման մեջ, կատարվել է գնահատականների վերլուծություն:***<br><br>***Ուսումնական տարվա ընթացքում ամբիոնի դասախոսները հատուկ ուշադրություն են դարձնում առանձին կուրսերում ուսանողների՝ առարկաների յուրացման մակարդակին: Դրանք ստուգվում են գործնական պարապմունքների ժամանակ, որոնց հարցերը նախապես ստանում են classroom-ի միջոցով:***<br><br>***Կիսամյակը մեկ անգամ ուսանողներին տրվում են գնահատվող առաջադրանքներ, որոնք լիովին կապված են բուն առարկայի հետ: Այդ առաջադրանքները քննարկվում են ամբիոնի նիստերի ժամանակ և հաստատվում նախապես: Գործնական աշխատանքներն ընթանում են արդիական մեթոդներով:***<br><br>***Ամբիոնում հաշվետու տարում յուրաքանչյուր կրթական ծրագրի առարկայի դասավանդման համար սահմանվել են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ: Բարձրացվել են դասավանդողների մասնագիտական որակները և նրանց աշխատանքի գնահատման մեխանիզմներն ու գործիքները: Կատարվել է ուսումնառողների արձագանքների ուսումնասիրում, դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:***<br><br>***Ամբիոնում չի եղել ուսանողի գնահատման որևէ վերանայում, քանզի ուսանողները գնահատվում են օբյեկտիվորեն:*** |
| Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները: |
| (տեքստը այստեղ) |

*Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը նիստերի ժամանակ հաստատում է ամբիոնի տարեկան աշխատանքային պլանը, դասախոսների աշխատանքային պլանները, գիտահետազոտական աշխատանքների պլանները, ամբիոնի և դասախոսների հաշվետվությունները: Հաստատվում են դասընթացների ԱՈՒՄՓ-ները, մեթոդական նյութերը, հարցաշարերն ու հարցատոմսերը: Հաստատվում են նաև կուրսային, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները: Յուրաքանչյուր կիսամյակի համար կազմվում է դասալսումների գրաֆիկ:*

*Ամբիոնի նիստերում քննարկվում են յուրաքանչյուր տարվա I և II կիսամյակներում դասավանդվող առարկաների դասախոսությունների փաթեթներն ու քննական հարցաշարերը:*

*Ամբիոնի նիստերի ժամանակ քննարկվում են ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները, որոնք լիովին կապված են մեթոդիկաների հետ: Քննարկվում են կուրսային աշխատանքների թեմաները՝ խուսափելով կրկնությունից:*

*Յուրաքանչյուր ամբիոնի նիստի ժամանակ քննարկվում են պրակտիկաների ընթացքը դպրոցում: Զեկուցում են պրակտիկայի ղեկավարները և իր տպավորությունն է կիսում ամբիոնի վարիչ Ա.Դոլուխանյանը, որը պարբերաբար այցելում է դպրոցներ: Քննարկվում են ուսանողների գեղագիտական կրթության հարցերը՝ այցելություններ մայրաքաղաքի թանգարաններ, Մատենադարան, մշակութային այլ վայրեր: Տարբեր նիստերի ժամանակ քննարկվել և հաստատվել են հայ դասական գրողներ Հ.Թումանյանի, Հ.Օրբելու և Ս.Կապուտիկյանի հոբելյանական ժողովածուների թեմաները և դրանց տպագրման խնդիրները:*

*Ս.Կապուտիկյանի 100-ամյակին նվիրված ժողովածուն կոչվում է ,,Սիլվա Կապուտիկյանի մանկավարժական ու բարոյական դասերը,,: ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի և Սիլվա Կապուտիկյանի տուն-թանգարանի հետ համատեղ հանրապետական գիտաժողովը տեղի ունեցավ 2019 թվականի հոկտեմբերի 10-ին՝ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում:*

*2019 թվականի մարտի 28-ին ամբիոնի և ամբիոնի «Գրական թերթ» խմբակի հրավերով բանասիրական ֆակուլտետում հյուրընկալվեցին ՀԳՄ նախագահ Էդվարդ Միլիտոնյանը, քարտուղար Պետրոս Դեմիրճյանը, «Գրական թերթի» գլխավոր խմբագիր Կարինե Խոդիկյանը, արձակագիր, բանաստեղծ, դրամատուրգ Սամվել Կոսյանը, գրականագետ Արմեն Ավանեսյանը, բանաստեղծ Խաչիկ Մանուկյանը, թերթի աշխատակից Շաքե Երիցյանը:*

*Ամբիոնը հրատարակել է Հովհ.Թումանյանին նվիրված «Հավերժ արդիական Ամենայն հայոց բանաստեղծը» հոդվածների ժողովածուն: Մեծ բանաստեղծի ծննդյան 150-ամյակին նվիրված արտագնա գիտաժողովը անցկացվեց գրողի տուն-թանգարանում ՝ Դսեղում՝ 2019 թվականի հունիսի 1-ին:*

*Ամբիոնը հրատարակել է նաև «Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագիրը և Հովսեփ Օրբելին», հոդվածների ժողովածուն: Զեկուցումները կարդացվել են ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի, Հայաստանի ազգային գրադարանի և Ծաղկաձորի Օրբելի եղբայրների տուն-թանգարանի հետ համատեղ հանրապետական գիտաժողովի ժամանակ՝ Օրբելի եղբայրների տուն-թանգարանում՝ 2019թվականի հոկտեմբերի 26-ին: «Հաջողության բանաձև» հաղորդաշարի մեկ թողարկումը նվիրված է այս գիտաժողովին: Ֆիլմը ցուցադրվել է «ATV»-ով և առկա է ՀՊՄՀ կայքէջում: Գիտաժողովը ,,Մանկավարժական համալսարան,, թերթում լուսաբանեց դոցենտ Լիլիթ Հովսեփյանը:*

*2019 թվականի ապրիլ ամսին, Ազգային գրադարանի ղեկավարության նախաձեռնությամբ, Հայաստանում Ֆրանկոֆոնիայի շրջանակներում կազմակերպվեց պրոֆեսոր Ա..Դոլուխանյանի ,,Ֆրանսիացի հայագետներ (XIX-XXդարեր) գրքի շնորհանդեսը, որին մասնակցում էին հանրապետության տարբեր գիտական*

| |
|---|
| ***հիմնարկների ներկայացուցիչներ:***<br><br>***2019թ. մայիսի 11-ին ՀՀ-ում Սերբիայի պատվո հյուպատոս Բաբկեն Սիմոնյանը հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հրավերով դասախոսություն կարդաց «Նշանավոր հայերը Սերբիայում» թեմայով:***<br><br>*Հայաստանի Գրողների միության հիմնադրման 85-ամյակի կապակցությամբ բանասիրական ֆակուլտետում հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի և դեկան Ա.Գալստյանի ջանքերով կազմակերպվել էր գրողների միության անդամների հանդիպում դասախոսների և ուսանողների հետ:Հրանտ Մաթևոսյանի անվան լսարանում գրող, հրապարակախոս, թարգմանիչ Ռազմիկ Դավոյանը, արձակագիր, դրամատուրգ Նորայր Ադալյանը, գրականագետ Պետրոս Դեմիրճյանը, արձակագիր Սուսաննա Հարությունյանը, բանաստեղծ, բուհի շրջանավարտ Տեր Թովմա Անդրեասյանը պատմեցին հետաքրքիր հուշեր ու դրվագներ իրենց ուսանողական և գրողների միությանն անդամակցելու տարիներից:*<br><br>***Ամեն տարի ապրիլին ամբիոնն ունենում է ՈՒԳԸ նստաշրջան, որի ժամանակ կարդացված զեկուցումներից լավագույնները տպագրվում են „Հայագիտական հանդեսում„:***<br><br>***Հեռակա մագիստրատուրայի երրորդ կուրսի մագիստրոս Նարինե Շահբազյանը 2019 թվականի ամռանը հրատարակել է գրքույկ՝ «Բանահյուսական ժանրերը «Հազար ու մի խաղ» ժողովածուում և դրանց ուսուցումը» խորագրով: Նարինե Շահբազյանը 2019 թվականի նոյեմբերից հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդն է:***<br><br>***Այս բոլոր խնդիրների քննարկումներն առկա են հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստերի արձանագրություններում և ամբիոնի անդամների անհատական մատյաններում:*** |

| Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները: | | |
|---|---|---|
| Արձ.N, ամսաթիվ | Քննարկման հարցերը | Ընդունված որոշումները |
| Արձ.N8,<br><br>30.01.<br><br>2019թ. | 1.Առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:<br><br>2.Առաջին կիսամյակի կատարողականների ամփոփում:<br><br>3.Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված ժողովածուի տպագրության երաշխավորման հարցը:<br><br>4.Առկա 2-րդ և 3-րդ կուրսերի մանկավարժական և շարունակական պրակտիկաների նախապատրաստում:<br><br>5.Երկրորդ կիսամյակի ԱՈՒՄՓ-ների հաստատում:<br><br>6.Երկրորդ կիսամյակի դասալսումների գրաֆիկի | 1. Առաջին կիսամյակի քննությունների արդյունքները համարել բավարար:<br><br>2.Հաստատել առաջին կիսամյակի կատարողականները:<br><br>3.Տպագրության երաշխավորել Հովհ.Թումանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված ժողովածուն:<br><br>4.Մանկավարժական պրակտիկաների նախապատրաստումը համարել բավարար:<br><br>5.Հաստատել 2-րդ կիսամյակի ԱՈՒՄՓ-ները:<br><br>6.Հաստատել երկրորդ կիսամյակի դասալսումների գրաֆիկը:<br><br>7.Ամբիոնի վարիչը և ամբիոնի |

| | | |
|---|---|---|
| | հաստատում:<br><br>7.Classroom-ում ամբիոնի դասախոսների ակտիվության հարցը:<br><br>8.Ընթացիկ հարցեր | Classroom-ի պատասխանատու Ա.Աբրահամյանի զեկույցը մշտադիտարկման վերաբերյալ: |
| Արձ.N9,<br><br>27.02.<br><br>2019թ | 1.Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի երկրորդ կիսամյակի հարցաշարերի հաստատում:<br><br>2.երկրորդ կիսամյակի դասալսումների ընթացքը<br><br>3.«Classroom» տիրույթում դասախոսների ակտիվության հարցը:<br><br>4.առարկայական նկարագրերի համապատասխանությունը գործող չափանիշներին:<br><br>5.ամբիոնի նոր ժողովածուի և Օրբելի եղբայրների տուն-թանգարանում հանրապետական գիտաժողովի կազմակերպման հարցը:<br><br>6.ուսանողների հետ էքսկուրսիաներ դեպի Մատենադարան և մշակութային վայրեր:<br><br>7.Մագիստրոսական թեզերի, ավարտական և կուրսային աշխատանքների կատարման ընթացքը:<br><br>8.Մանկավարժական պրակտիկայի ընթացքը:<br><br>9.Քարոզարշավ ՀՀ մարզերի ավագ դպրոցներում: | 1.Հաստատել հարցաշարերը:<br><br>2.Երկրորդ կիսամյակի դասալսումներն ընթանում են հաստատված գրաֆիկով:<br><br>3. «Classroom» տիրույթում դասախոսների ակտիվությունը 100 տոկոս է:<br><br>4.Ամբիոնի առարկայական նկարագրերը համապատասխանում են գործող չափանիշներին:<br><br>5.,,Սասունցի Դավիթ,, էպոսի համահավաք բնագիրը և Հ.Օրբելին,, ժողովածուի լույս ընծայում և հոկտեմբերին հանրապետական գիտաժողովի անցկացում:<br><br>6.Իրականացնե լբակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների այցելությունները Մատենադարան, թանգարաններ և Երևանի մշակութային այլ վայրեր:<br><br>7.Բոլոր ղեկավարները զեկուցում են ընթացքի մասին:<br><br>8.Ամբիոնը երկրորդ կիսամյակում ունի մանկավարժական պրակտիկա բակալավրիատում և մագիստրատուրայում (առկա և հեռակա): Դրանք ընթանում են Երևանի, Աբովյանի, Արմավիրի, Աշտարակի դպրոցներում: Մանկավարժական պրակտիկայի ընթացքը համարել լավ:<br><br>9.Ա.Դոլուխանյանը դեկան Ա.Գալստյանի հետ մարտ ամսին գնալու են Մասիս քաղաքի ավագ դպրոց, որի տնօրենը մեր ֆակուլտետի շրջանավարտ է: Ա.Դոլուխանյանը |

| | | |
|---|---|---|
| | 10.Ընթացիկ հարցեր: | հանդես կգա դասախոսությամբ:<br>10. Դասամատյանների, տեղեկագրերի անսխալ և ժամանակին լրացում: |
| Արձ.N10,<br>13.03.<br>2019թ. | 1.Ն.Շահբազյանի«Բանահյուսական ժանրերը «Հազար ու մի խաղ» ժողովածուում և դրանց ուսուցումը» գրքույկը տպագրության երաշխավորելու հարցը:<br>2.ՀՊՄՀ հավատարմագրմանը վերա բերող ինքնավերլուծության չափանիշների քննարկում (1-5):<br>10.Ընթացիկ հարցեր | 1.Ն.Շահբազյանի«Բանահյուսական ժանրերը «Հազար ու մի խաղ» ժողովածուում և դրանց ուսուցումը» գրքույկը երաշխավորել տպագրության:<br>2.Ամբիոնի նիստերում պարբերաբար քննարկել ինքնավերլուծության չափանիշները: |
| Արձ.N11,<br>21.03.<br>2019թ. | 1.Ինքնավերլուծության չափանիշների քննարկում (8-10):<br>2. Հանդիպում ժամանակակից հայ գրողների հետ:<br>3.Սեմինար և գործնական պարապմունքների ընթացքը:<br>4. ՈՒԳԸ աշխատանքի ընթացքը: | 1.Ամբիոնը համաձայն է է ինքնավերլուծության չափանիշներին:<br>2.ժամանակակից գրողների հետ հանդիպումը կազմակերպե «Գրական թերթ»-ի խմբագրակազմի հետ հանդիպման համատեղ:<br>3.Սեմինար և գործնական պարապմունքների ընթացքը համարել բավարար:<br>4.Հաստատել ՈՒԳԸ թեմաները. ղեկավար՝ պրոֆեսոր Ա.Գ.Դոլուխանյան<br>1. Ակնը հայոց կյանքում ըստ Գ.Դարիկյանի «Վիրավոր կռունկ» վեպի, զեկուցող՝ առկա բակալավր IV կուրսի ուսանողուհի Մարիամ Վարդանյան<br>2. Նորայր Ադալյանի «Արտույտը» վիպակը, զեկուցող՝ առկա բակալավր IV կուրսի ուսանողուհի Զվարթ Ամբրոյան ղեկավար՝ դոցենտ Լ.Վ.Հովսեփյան<br>3.Գրիգոր Նարեկացու տաղերի առանձնահատկությունները, զեկուցող՝ առկա մագիստրատուրայի I կուրսի մագիստրոս Մարգարիտ Ավետիսյան |

| | | |
|---|---|---|
| | | ղեկավար՝ դոցենտ Ռ.Վ.Դոլուխանյան<br>4. «Կարոտ» բանաստեղծության ուսուցումը V դասարանում ինովացիոն մեթոդներով, զեկուցող՝ առկա բակալավր III կուրսի ուսանողուհի Զարուհի Սիմոնյան<br>5.«Տեղի պարագա» թեմայի ուսուցումը 8-րդ դասարանում, զեկուցող՝ առկա բակալավր III կուրսի ուսանողուհի Անի Հայրապետյան |
| | 5.Հանդիպում «Գրական թերթ»-ի խմբագրակազմի հետ:<br><br>6.Գիտական նստաշրջան՝ նվիրված հայ գրականության դասավանդման մեթոդիկայի խնդիրներին:<br><br>7.Ընթացիկ հարցեր՝<br><br>ա) Google classroom-ի գնահատվող առաջադրանքի հարցը:<br><br>բ) Երկրորդ կիսամյակի հարցատոմսերը հաստատվում են այս նիստով: | 5.«Գրական թերթ»-ի խմբագրակազմի և երկու ժամանակակից գրողների հետ հանդիպումը կազմակերպել 2019 թվականի մարտի 28-ին:<br><br>6.Ամբիոնի գիտական նստաշրջանը արտագնա է, այն տեղի կունենա հունիսի 1-ին՝ Դսեղում՝ Հովհ. Թումանյանի տուն-թանգարանում:<br><br>ա)Յուրաքանչյուր դասընթացի համար կիսամյակում տեղադրվում է 1 գնահատվող առաջադրանք:<br><br>բ) Երկրորդ կիսամյակի քննությունների հարցատոմսերը հաստատել այս նիստով: |
| Արձ.N12,<br><br>25.04.<br><br>2019թ. | 1.Ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի պաշտպանության նախապատրաստում:<br><br>2.Հեռակա 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների կատարման ընթացքը:<br><br>3.Դասախոսների հաշվետվությունները ուսանողների հետ տարվող գիտահետազոտական աշխատանքների վերաբերյալ:<br><br>4. «Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագիրը և Հովսեփ Օրբելին» ժողովածուի տպագրության երաշխավորման հարցը:<br>5.Ընթացիկ հարցեր: | 1.Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների նախապաշտպանությունները նշանակել մայիսի 2-ին և 3-ին:<br><br>2.Հեռակա 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների ընթացքը համարել բավարար:<br><br>3. Ուսանողների հետ տարվող գիտահետազոտական աշխատանքների արդյունքները տե՛ս համապատասխան մատյաններում:<br>4.«Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագիրը և Հովսեփ Օրբելին» ժողովածուն երաշխավորել տպագրության: |

| | | |
|---|---|---|
| Արձ.N12,<br>03.05.<br>2018թ. | 1.Հեռակա բակալավրիատի հինգերորդ կուրսի ավարտական աշխատանքների նախապաշտպանության հարցը: նախապաշտպանության հարցը:<br><br>2.Ասպիրանտ Լիանա Սամվելի Օհանյանի «Կարինե Խոդիկյանի ստեղծագործական աշխարհը» գրքույկը տպագրության երաշխավորելու հարցը:<br><br>3.Ընթացիկ հարցեր՝ հեռակա 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների նախապաշտպանության հարցը: | 1.Ամբիոնը պաշտպանության երաշխավորեց Քնարիկ Արտուշի Նազարյանի, Արմինե Նորիկի Վարդանյանի, Սիլվա Հայկի Պետոյանի, Ելենա Ծավարշի Մկրտչյանի, Մելիքյան Սվետլանա Անդրանիկի Մելիքյանի, Խաչիկ Գարիկի Հովհաննիսյանի, Ռիմա Ալեքսանդրի Խաչատրյանի ավարտական աշխատանքները: Արևիկ Ջիվանի Մնոյանի «Խաչատուր Աբովյանի «Պարապ վախտի խաղալիք» ժողովածուի բանահյուսական շերտերը և դրանց ուսուցումը» ավարտական աշխատանքը պաշտպանության չի երաշխավորվում:<br>2.Լիանա Սամվելի Օհանյանի «Կարինե Խոդիկյանի ստեղծագործական աշխարհը» գրքույկը երաշխավորել տպագրության:<br>3.Ամբիոնի վարիչ Ա.Դոլուխանյանը հայտնեց, որ հեռակա 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների նախապաշտպանությունը նշանակված է մայիսի 20-ին՝ ժամը $9^{30}$-ին: |
| Արձ.N13,<br>20.05.<br>2019թ. | 1.Երկրորդ կիսամյակի քննաշրջանի նախապատրաստում:<br><br>2.Հեռակա բակալավրիատի 5-րդ կուրսի ավարտական աշխատանք ների նախապաշտպանության հարցը:<br><br>3.Առկա երրորդ կուրսի կուրսային աշխատանքների պաշտպանության հարցը:<br><br>4.classroom-ում ամբիոնի դասախոսների ակտիվության հարցը: | 1Երկրորդ կիսամյակի քննությունների նախապատրաստումը համարել բավարար:<br><br>2.Նախապաշտպանության ներկայաց վել է վեց ավարտական աշխատանք: պաշտպանության երաշխավորել բանասիրական ֆակուլտետի հեռակա բակալավրիատի 5-րդ կուրսի ուսանողուհիներ Արփինե Կամոյի Աթանեսյանի, Հեղինե Մանվելի Անդրեասյանի, Հռիփսիմե Գեղամի Արշակյանի, Մարինե Մուշեղի Սարգսյանի, Արևիկ Ջիվանի Մնոյանի, Աստղիկ Վաղարշակի Ալեքսանյանի ավարտական աշխատանքները:<br><br>3.Կուրսային աշխատանքների պաշտպանությունը նշանակված է հունիսի 5-ին՝ ժամը 14-ին: Ռ.Դոլուխանյանը ղեկավարում է 12 ուսանողի:<br><br>4.Դասախոսները ներկայացրեցին գրավոր հաշվետվութ-յուններ 2018-2019 ուս. տարվա առաջին կիսամյակի էլեկտրոնային ուսուցման գործառույթների վերաբերյալ: |

| | | |
|---|---|---|
| Արձ.N14,28.06.<br><br>2019թ. | 1.Երկրորդ կիսամյակի քննություն ների և ստուգարքների արդյունքների ամփոփում:<br><br>2.Ամբիոնի հերթական արտագնա գիտաժողովը՝ նվիրված Հովհ.Թումանյանի ծննդյան 150-ամյակին մեծ գրողի Դսեղի տուն-թանգարանում:<br><br>3. 2019-2020 ուս.տարվա առկա և հեռակա բակալավրիատի ավարտական աշխատանքների և առկա և հեռակա մագիստրատուրայի մագիստրոսական թեզերի թեմաների հաստատում:<br><br>4.2019-2020 ուս. տարվա դասաբաշխման հարցը:<br><br>5. Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2018-2019 ուս.տարվա հաշվետվության հաստատում:<br><br>6.Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոսների 2018-2019 ուս.տարվա հաշվետվությունների հաստատում:<br><br>7.Ռուզան Դոլուխանյանի դիմումը՝ նրա պատրաստած «Մանկավարժական և բարոյախոսական դասերը «Բազմավէպում (1886-1906թթ.)» երրորդ գրքի տպագրության երաշխավորելու հարցը:<br><br>8.Ընթացիկ հարցեր՝ ա) ՇՊՀ-հանրապետական գիտաժողովի մասնակցության հրավեր: Մենք մասնակցելու ենք: Հայտերի լրացման ժամկետը մինչև հոկտեմբերի 10-ն է: Գիտաժողովը տեղի կունենա նոյեմբերի 8-9-ը:<br><br>բ) Փաստաթղթերի փաթեթ՝ որակի ապահովման ՀՊՄՀ քաղաքականության վերաբերյալ: Մինչև հուլիսի 10-ը քննարկելու և համապատասխան գրություն ենք կազմելու ու ուղարկելու Կրթական | . Երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքները համարել բավարար:<br><br>2. Ամբիոնը իր ուժերով հրատարակել է «Հավերժ արդիական Ամենայն հայոց բանաստեղծը» խորագրով հոդվածների ժողովածուն:<br><br>3. Հաստատել առկա և հեռակա բակալավրիատի ավարտական աշխատանքների և առկա և հեռակա մագիստրատուրայի մագիստրոսական թեզերիթեմաները:<br><br>4.Ուսումնական մասը աշխատում է ծավալների վրա:<br><br>5.Հաստատել ամբիոնի2018-2019 ուս. տարվա հաշվետվությունը:<br><br>6. Հաստատել ամբիոնի դասախոսների հաշվետվությունները:<br><br>7.Տպագրության երաշխավորել Ռուզան Դոլուխանյանի դիմումը՝ նրա պատրաստած «Մանկավարժական և բարոյախոսական դասերը «Բազմավէպում (1886-1906թթ.)» երրորդ գրքի տպագրության երաշխավորելու հարցը:<br><br>8.Զեկուցումների թեմաները կհաստատենք սեպտեմբերի նիստով:<br><br>բ)Քննարկել և մինչև հուլիսի 10-ը ներկայացնել կարծիք: |

| | | |
|---|---|---|
| | գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչություն:<br><br>գ) Ամբիոնի ասպիրանտ Հասմիկ Գագիկի Հովսեփյանի «Բագրատունիների հայոց թագավորությունը և Գրիգոր Մագիստրոսի թղթերը» հոդվածը տպագրության երաշխավորելու հարցը: | գ) Հասմիկ Գագիկի Հովսեփյանի «Բագրատունիների հայոց թագավորությունը և Գրիգոր Մագիստրոսի թղթերը» հոդվածը երաշխավորել տպագրության: |
| Արձ.N1,26.08.<br><br>2019թ | 1.Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2019-2020 ուս.տարվա դասաբաշխման հարցը:<br><br>2.Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2019-2020 ուս.տարվա առաջին կիսամյակի ԱՈՒՄՓ-ների վերահաստատման հարցը: | 1.1.Ամբիոնի դասաբաշխումը պատրաստ է, հանձնված է հաստատման:<br><br>2. Վերահաստատել հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2018-2019 ուս.տարվա առաջին կիսամյակի ԱՈՒՄՓ-ները: |
| Արձ.N2,18.09.<br><br>2019թ. | 1.Ամբիոնի 2019-2020 ուս.տարվա աշխատանքային պլանի հաստատում:<br><br>2.Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների հաստատում:<br><br>3.Պրոֆ.Ա.Դոլուխանյանի զեկուցում ները Մոսկվայի միջազգային գիտաժողովներին՝ նվիրված Կոմիտասի և Հովհ.Թումանյանի ծննդյան 150-ամյակներին:<br><br>4.Հեռակա մագիստրատուրայի թեզերի կատարման ընթացքը:<br><br>5.Առաջին կիսամյակի դասալսում ների գրաֆիկի հաստատում:<br><br>6.Մանկավարժական պրակտիկաների դասալսումների գրաֆիկի հաստատում:<br><br>7.Առկա բակալավր 3-րդ և 4-րդ կուրսերի մանկավարժական պրակ-տիկաների նախապատրաստում:<br><br>8.Մանկավարժական պրակտիկա ների բարեփոխումների ընթացքի | 1.Հաստատել ամբիոնի 2019-2020 ուս.տարվա աշխատանքային պլանը:<br><br>2.Հաստատել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները:<br><br>3 Հավանություն տալ.Ա.Դոլուխանյանի զեկույցին՝ Մոսկվայի գիտաժողովի վերաբերյալ:<br><br>4.Հաստատել թեզերի ղեկավարների զեկույցները կատարման ընթացքի վերաբերյալ:<br><br>5.Հաստատել առաջին կիսամյակի դասալսումների գրաֆիկը:<br><br>6.Հաստատել մանկավարժական պրակտիկաների դասալսումների գրաֆիկը:<br><br>7.Պրակտիկաների ղեկավարները զեկուցեցին պրակտիկաների նախապատրաստման ընթացքի վերաբերյալ:<br><br>8.Մանկավարժական պրակտիկան իր բոլոր տեսակներով (ուսումնաճա |

| | | |
|---|---|---|
| | վերաբերյալ քննարկում:<br><br>9. Դասախոսների զեկուցումները Classroom-ում կատարվող աշխատանքների վերաբերյալ: | նաչողական, կիրառական-վերլուծական, ամփոփիչ-գնահատող, մանկավարժա հետազոտական) թե՛ բակալավ րիատում, թե՛ մագիստրա տուրայում համարել ամբիոնի աշխատանքների գերխնդիրներից մեկը, քանի որ մանկավարժական համալսարանը ազգային դպրոցի համար պատրաստում է ժամանակակից, բազմակողմանի զարգացած, մասնագիտական գիտելիքներով և մեթոդներով զինված նվիրյալ ուսուցիչներ:<br><br>9.Հաստատել դասախոսների հաշվետվությունները Classroom-ում կատարվող աշխատանքների վերաբերյալ: |
| Արձ.N3,09.10.<br><br>2019թ. | 1.«Բակալավրի ավարտական աշխատանքի» և «Մագիստրոսական թեզի մասին» նոր կարգի հաստատման գործընթացի քննարկումը:<br><br>2.Մանկավարժական պրակտիկաների ընթացքը:<br><br>3.Ընթացիկ հարցեր: | 1.ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի նկարագրությունը և մագիստրոսական թեզի չափորոշիչները լիովին համապատասխանում են ամբիոնի գիտամեթոդական պահանջներին և ընդունելի են ամբողջությամբ:<br><br>2.Հաստատել պրակտիկաների ղեկա վարներ Ռ.Դոլուխանյանի և Գ.Մարդ յանի հաղորդումը պրակտիկաների վերաբերյալ: |
| Արձ.N4,22.10.<br><br>2019թ. | 1.Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Էդգար Վլադիսլավի Ապրեսյանի «Բանահյուսական նյութերի ուսուցումը հիմնական և ավագ դպրոցներում» թեկնածուական ատենախոսության հիմնավորման և եզրականության հարցը:<br><br>2.Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ Իրավաբանական կենտրոնի ղեկավար Կարեն Ղևոնդյանի կողմից ուղարկված «ՀՊՄՀ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման» կարգի 27 և 33-րդ կետերում փոփոխությունների քննարկումը:<br><br>3.Ավարտական աշխատանքների կատարման ընթացքի քննարկում: | 1.Թեման խիստ արդիական է, որովհետև այն կապված է ներկայիս հայ դպրոցի տարբեր դասարաններում բանահյուսական նյութերի ուսումնական ծրագրերում եղած թեմաների հետ:<br><br>2.Ամբիոնը ընդունելի է համարում Իրավաբանական կենտրոնի ղեկավար Կ.Ղևոնդյանի նախաձեռնությունը «ՀՊՄՀ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման» կարգի 27 և 33-րդ կետերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:<br><br>3.Հաստատել ղեկավարների հաշվետվությունները ավարտական աշխատանքների ընթացքի վերաբերյալ: |

| | | |
|---|---|---|
| | 4.Ուսանողական հերթական գիտական նստաշրջանի թեմաների հաստա-տում:-<br><br>5.Ամբիոնի դասախոսների 2019-2020 ուս.տարվա. գիտահետազոտական աշխատանքների թեմաների հաստատում:<br><br>6.Ամբիոնի հայցորդների ատեստացիա:<br><br>7.Ամբիոնի դասախոսների զեկուցումները Գյումրու Մ.Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտում:<br><br>8.2019թ.հոկտեմբերի 26-ին հանրապետական գիտաժողով Ծաղկաձորում (Հայ հին և միջնադարյան գրակ. և նրա դաս.մեթոդիկայի ամբիոն, Մ.Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտ, Օրբելի եղբայրների թանգարան):<br><br>9.Հանրապետական գիտաժողով՝ նվիրված Սիլվա Կապուտիկյանի 100-ամյա հոբելյանին (նախաձեռնողներ՝ Հայ հին և միջնադարյան գրակ. և նրա դաս.մեթոդիկայի ամբիոն, Մ.Աբեղյանի անվ.գրականության ինստիտուտ):<br><br>10.Classroom-ում ամբիոնի դասախոսների ակտիվության հարցը:<br><br>11Ընթացիկ հարցեր: | 4.Հաստատվեցին ուսանողական հերթական գիտական նստաշրջանի մասնակիցներն ու զեկուցումների թեմաները:<br><br>5.Հաստատել ամբիոնի դասախոսների 2019-2020 ուս.տարվա. գիտահետազոտական աշխատանքների թեմաները:<br><br>6.Ամբիոնի ասպիրանտի և հայցորդների ատեստացիան տեղափոխվում է նոյեմբեր ամիս:<br><br>7. Ամբիոնի դասախոսները նոյեմբերի 8-ին զեկուցումներով հանդես եկան Գյումրու Մ.Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտում կազմակերպված հանրապետական գիտաժողովում::<br><br>8.Համատեղ հանրապետական գիտաժողովը Ծաղկաձորում ընթացավ բարձր մակարդակով: ,,Հաջողության բանաձևը,, ֆիլմաշարի մեկ թողարկում նվիրվեց այդ գիտաժողովին:<br><br>9.Հանրապետական գիտաժողովը տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվ.գրականության ինստիտուտում: Նախապես ամբիոնը լույս է ընծայել գիտաժողովի զեկուցումների ժողովածուն:<br><br>10.Ամբիոնի դասախոսները չեն թերանում Classroom հարթակում, ժամանակին տեղադրում են դասախոսությունների, սեմինար ու գործնական պարապմունքների,լրացուցիչ նյութերի փաթեթները, հարցաշարերը: |
| Արձ.N5,28.11.<br><br>2019թ. | 1.Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նոր հայցորդ Նարինե Շահբազյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:<br><br>2.Հայ հին և միջնադարյան գրականության և նրա | 1.Ամբիոնի հայցորդ Նարինե Խաչիկի Շահբազյանի գիտական ղեկավար նշանակել ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աելիտա Գուրգենի Դոլուխանյանին, թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Կնոջ կերպարը միջնադարյան հայ բանաստեղծության մեջ ըստ ձեռագիր և տպագիր աղբյուրների»:<br><br>2.Երաշխավորել տպագրության ամբիոնի «Ղևոնդ Ալիշանը |

| | | |
|---|---|---|
| | դասավանդման մեթոդիկայի ամբիոնի «Ղևոնդ Ալիշանը հանրագիտակ» ժողովածուի թեմաների հաստատման և ժողովածուի հրատարակման երաշխավորության հարցը:<br><br>3.Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտի և հայցորդների ատեստացիա:<br><br>4.Դասալսումների ընթացքը:<br><br>5.Կուրսային աշխատանքների թեմաների հաստատում:<br><br>6.Ուսանողների էքսկուրսիաներ դեպի Մատենադարան, թանգարաններ, Դ.Դեմիրճյանի տուն-թանգարան և այլ մշակութային վայրեր:<br><br>7.Առկա և հեռակա մագիստրատուրայի 2-րդ կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկաների արդյունքների ամփոփում:<br><br>8.Քարոզարշավ Հայաստանի մարզերի դպրոցներում:<br><br>9.Ամբիոնի դասախոսների ակտիվությունը Classroom հարթակում: | հանրագիտակ» ժողովածուն և հաստատել զեկուցումների թեմաները:<br><br>3.Ատեստավորել ամբիոնի ասպիրանտ Հասմիկ Հովսեփյանին և հայցորդներ Լիլյա Հարությունյանին ու Էդգար Ապրեսյանին:<br><br>4.Դասալսումներն ընթանում են համաձայն հաստատված գրաֆիկի: Արդյունքներտ գրանցվում են դասալսումների մատյանում:<br><br>5.Հաստատել առկա և հեռակա կուրսերի կուրսային աշխատանքների թեմաները:<br><br>6.Պարբերաբար ուսանողներին տանել Մատենադարան, պատկերասրահ, թանգարաններ, այլ մշակութային վայրեր:<br><br>7. Առկա և հեռակա մագիստրատուրայի 2-րդ կուրսերի մանկավարժահետա զոտկան պրակտիկաների արդյունքները համարել գոհացուցիչ:<br><br>8.Ա.Դոլուխանյանը դեկան Ա.Գալստյանի և մագիստրոս Հովի.Սարգսյանի հետ քարոզարշավի շրջանակներում եղան Արագածոտնի մարզի Բերքառատ և Հնաբերդ գյուղերի դպրոցներում: Քարոզարշավի արդյունքները գոհացուցիչ են:<br><br>9.Ամբիոնի դասախոսները ակտիվ են Classroom հարթակում: Հաստատել հաշվետվությունները: |
| Արձ.N6,04.12. 2019թ. | 1.Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդ ման մեթոդիկայի ամբիոնի 2019 թվականի հաշվետվության հաստատում:<br>2.Ընթացիկ հարցեր: | 1.Հաստատել Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2019 թվականի հաշվետվությունը: |

| Պրոֆեսորադասախոսական կազմը | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Կանայք | Դոկտոր | Պրոֆե սոր | Գիտ.թ եկն. | Դոցենտ | Ասիս-տենտ | Դասա խոս | Ընդ-նը |
| Հաստիք ային | 4 | 1 | 1 | 3 | 3 | | | 4 |
| Համա տեղող | | | | | | | | |
| Ժամա | | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| վճարայ ին | | | | | | | | |
| Ընդա-մենը | | | | | | | | 4 |

